յետոյ, եղած է բիւրաւոր Հայկազանց գաղթականու-
թիւնը յԱքսէրայէ։ Ցիշատակարանը կը յաւելու.
« Ուխտ դնեն ընդ իշխանին Ֆէօդոսիու, ելեալ ի
» յԱխսարայէ իշխանք և ազնիւք (հայկազունք) և
» հասարակ ժողովուրդք՝ վառեալք զինու, պատե-
« րազմելով ընդ Թաթարացն ճեխքեալք գան ի Ղրիմ
» և բնակեն ի Ֆէօդոսիա, ի Կազարաթ և ի
« Սուրխաթ և ի կողմանս սոցա. այս եղև ՉԾԹ
» (1330) թուին »։

Ուշադրութեան արժանի են յիշատակարանիս
խօսքերը. « վառեալք զինու » գաղթականաց մէջ
բազմութիւն հայ զինուորաց եղած են, իրենց սպայ-
ներով, խմբավարներով և զօրագլուխներով. զի
քիչ ժամանակ վերջը, ասի ի Կաֆայէ 40,000 հայ
զինուորներ անցել գնացել են ի Փոտոլեան Կամ-
նից, պաշտպանելու այն հայկական քաղաքը, ընդ-
դէմ յարձակմանց Թաթարաց, լուծելով միանգա-
մայն Անւոյ կործանման վրէժը։ Ըստ յիշատակա-
րանին « Պատերազմելով ընդ Թաթարացն ճեխ-
քեալք գան ի Ղրիմ »։

Անշուշտ Թաթարք ամենայն ջանք արել են, որ
ի Թաթարստան մնան, և բիւրաւոր հայ աշխատա-
սէր ժողովուրդը, չէնցընեն և մշակեն իրենց ա-
նապատները։ Սոյն այս դէպքը պատահել է 1778
ին ևս, երբ զրիմեցի հայկազանց հրաման եղել է,
թողուլ այն աշխարհքը և երթալ բնակիլ ի Ռու-
սաստան. տեղացի Թաթարք ամենայն ջանք ի գործ
դրել են, արգելլինելու Հայոց գաղթականութեան
ի Ղրիմէ, այլ ի զուր։ Ցիշատակարանիս գրուցած
տեղուանք, ուր հոծ խիտ առ խիտ բնակել են Հայ-
կազունք, արևելեան — հարաւային մասունք են թե-
րակղզւոյն. Կազարաթ և Սուրխաթ մօտ են Կա-